

Ա.Շ. ՍԵՏՐՈՍՅԱՆ

**МЕТОДИКА ОБУЧЕНИЯ СТРУКТУРНЫМ ОСОБЕННОСТЯМ
АРМЯНСКИХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ В
ТЕХНИЧЕСКОМ ВУЗЕ**

Рассматривается методика обучения структурным особенностям научно-технических терминов в техническом вузе. Показано, что структурные особенности терминов в каждой области обусловлены как семантическими свойствами их терминотерминов, так и внутренними и внешними факторами развития терминов, их мотивацией в конкретной системе терминов. Обучение этим особенностям в соответствии с принципами дидактики обеспечивает освоение структур терминов со стороны учащихся.

Ключевые слова: семантические свойства термина, закономерности терминостроения, структура термина, принципы дидактики.

H.TS. PETROSYAN

**METHODS OF TEACHING THE PECULIARITIES OF FORMING
ARMENIAN SCIENTIFIC-TECHNICAL TERMS IN AN ENGINEERING HEE**

Methods of teaching the structure of scientific and technical terms in an engineering HEE is considered. It is shown that the peculiarities of the term structures in each sphere depends on the semantic properties of their term systems, the internal and external factors of the term development, their motivation in their term systems. Teaching these facts in accordance with the didactics principles ensures the mastery of the term structures by the students.

Keywords: semantic properties, laws of term-building, term structure, didactics principles.

ՀՏԴ 81'366.593

Դ.Ռ. ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

ՀՈՐԴՈՐԻ ԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՔԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են անգլերենում հորդորի կարգի հաղորդակցական-գործաբանական առանձնահատկությունները: Հորդորական բնույթ ունեցող նախադասությունների գործառական վերլուծությունը բացահայտում է անգլերենում հորդորի կարգին բնորոշ գործաբանական տարատեսակ դրսևորումներ:

Առանցքային բառեր: հորդորի կարգ, հրամայական նախադասություն, հորդորական նախադասություն, գործաբանական դրսևորում:

Ներածություն: Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ոչ միայն կատարում է տեղեկատվական գործառույթ, այլ նաև ապահովում է մարդկանց համատեղ գործունեությունը: Մարդկային կենսակերպի կարևորագույն բաղադրիչի՝ հաղորդակցական գործունեության դրսևորումների ուսումնասիրությունը ժամանակակից լեզ-

վաբանության մեջ կենտրոնական տեղ է գրավում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում լեզվամտածողական գործաբանությանը, նախադասության մտքի և լեզվի իմաստաբանական կառուցվածքի ուսումնասիրմանը:

Կարևորելով հորդորի դերը մարդկային շփման և գործունեության ընթացքում՝ Ա. Բելսկին հետևյալ կերպ է արտահայտվել. «Մարդիկ անընդմեջ դիմում են մեկը մյուսին տարբեր հորդորական ասույթներով: Աշխատանքային շփումը հնարավոր է պատկերացնել առանց գործողության դրդման» [1]:

Թեև հորդոր արտահայտող լեզվական միջոցներն անգլերենում ունեն լայն գործածություն և բազմազան դրսևորումներ, այնուամենայնիվ, **հորդորական նախադասությունները** չեն համարվում հաղորդակցական առանձին տեսակ և սովորաբար դիտարկվում են հրամայական եղանակի շրջանակներում:

Հորդորի կարգը: Գործնականում հորդորի կարգը բնութագրվում է որպես խոսողի կամքը կամ թելադրանքը ներկայացնող արտահայտչամիջոց, որն անպայմանորեն ենթադրում է հասցեատիրոջ (խոսակցի) առկայություն և պատասխան գործողություն: Այս կարգն արտահայտելու ավանդական ձևն անգլերենում **հրամայական նախադասությունն է (imperative)**, թեև հորդորի արտահայտչամիջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսողը երբեմն գիտակցված կերպով շեղվում է նորմատիվային կառույցներից՝ փորձելով հորդոր արտահայտելու համար կիրառել անուղղակի միջոցներ, որոնք խոսակցին կորդեն անհրաժեշտ եզրահանգման: Այդպիսի միջոցները ժամանակակից խոսակցական լեզվում բավականին գործածական են, թեև շարահյուսորեն միանգամայն տարբեր կառույցներ են և միայն հաղորդակցական որոշակի իրավիճակում են ստանձնում հորդոր ապահովելու գործառույթը: Դրանք կարող են որակվել որպես հորդոր արտահայտելու այլընտրանքային ձևեր: Օրինակ՝ ա) **“You must leave the room at once.”**, բ) **“Will you turn your face a little to the light?”** she said politely., գ) **“I want you to talk to Mrs.Strickland,”**-she said.”She’s raving about your book.”

Լեզվի՝ որպես մարդկային հաղորդակցման միջոցի կարևոր գործառույթը խոսողությանը մասնակիցների կողմից միմյանց հնարավորինս ճիշտ ընկալելու ունակության մեջ է: Գործնականում մտքի ճիշտ ընկալումը պետք է վերագրել ոչ թե լեզվի կանոններին, այլ մարդկային սթափ մտքին, այն է՝ տրամաբանական ճիշտ հետևություն կատարելու հմտությանը, այսինքն՝ ճշգրտորեն կանխատեսելու խոսող կողմերի մտադրությունները՝ ըստ նրանց արտաբերած մտքերի: Այս տեսանկյունից հատուկ կարևորություն է ստանում գործաբանությունը (**pragmatics**):

Ջ. Լիչը և Ս. Լեինսոնը գործաբանությունը ներկայացնում են որպես համատեքստի իմաստ (**meaning in context**) [2, 3]:

Թերևս անհերքելի իրողություն է, որ գործաբանական տեսանկյունից հորդորական նախադասությունների համարժեք ընկալումը զգալիորեն կախված է և՛ հա-

դորդակցային իրավիճակի համատեքստից, և՛ արտաբերված հնչերանգից, և՛ հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերություններից: Ուշագրավ է, որ հենց թվարկված գործոններն են ձևավորում հորդորական նախադասությունների գործաբանական ներուժը, ինչով էլ պայմանավորված է դրանց տարբերակված ընկալումը:

Թեև որոշ լեզվաբաններ հորդորական նախադասություններն առանձնացնում են խոսքային ակտերի երեք տեսակներում [4]՝ **թելադրող (prescriptive)**, **հայցող (requestive)**, **ակնարկող (suggestive)**, այնուամենայնիվ, լեզվաբանության մեջ չկա միասնական ըմբռնում հորդորի գործառական դաշտի ծավալի և արտաքին սահմանների վերաբերյալ, ինչը ենթադրում է, որ այդ սահմանները մինչ օրս հստակեցված չեն և կարող են կամայականորեն տատանվել:

Հարկ է նկատել, որ գործնականում հորդոր արտահայտող յուրաքանչյուր նախադասություն գործաբանորեն կարող է հանդես գալ տարբեր նրբերանգային դրսևորումներով, որոնք թեև հիմքում ունեն ընդհանուր բնութագրական առանձնահատկություններ, այնուամենայնիվ, ընկալվում են որպես հորդորի կարգին բնորոշ առանձին ենթատեսակներ:

Այս տեսանկյունից **թելադրող (prescriptive)** խոսքային ակտերի շարքը կարող են դասվել ոչ միայն զուտ հրամայական կառուցվածք ունեցող և գործաբանորեն որպես **հրաման, հրահանգ** կամ **կարգադրություն** ընկալվող նախադասությունները, այլ նաև.

➤ **Կամք, ցանկություն (will, wish)** արտահայտող նախադասությունները, որոնց միջոցով խոսողն իր կամքը կամ ցանկությունն է հայտնում՝ համոզված լինելով, որ այն պիտի կատարվի: Օրինակ՝ ա) **“Come and meet Agnes, who takes care of everything and manages the house,”** said Mr. Wickfield.”, բ) **“I wish you to promise** never to accept any offer Mr. Darcy may make to you.” գ) **“Let me go first,** he said. I somehow couldn’t bear to sit here and see you walk off.”

➤ **Պահանջ, հարկադրանք (demand, compulsion)** արտահայտող նախադասությունները, որոնց միջոցով խոսողի կողմից պարտադրվում է որևէ գործողության կատարում: Օրինակ՝ **“You must give me time,”** said Giulia Lazzari. “I can’t think clearly just now. **You’ll have to wait.**”

➤ **Ցուցում, ուղղորդում (direction, guidance)** արտահայտող նախադասությունները, որոնք կարող են բնութագրվել որպես խոսողի կողմից թելադրվող սահմանված կանոն կամ ճիշտ ուղղություն, որի միջոցով կարգավորվում են գործողության կատարման կարգը և միջոցները: Օրինակ՝ **“Write at the bottom** that you love Chandra Lal very much,” I said **“Tell him** that you hope to see him soon.” - **“Now write the address** on the envelope,” I told her.

Հաղորդակցական այս ենթատեսակը կարող է ներկայացվել նաև սահմանական եղանակի տարբեր ժամանակաձևերով, “will” կամ “must” եղանակավորող բայերի ուղեկցությամբ: Օրինակ՝ ա) “No, **you will not**,” Jennifer blocks him. “**You are not going anywhere** until you apologise to Laurence.”, բ) “**You must stay here and learn more French.**”

➤ **Դիպողություն, նախադիմք (rebuke, reproach)** արտահայտող նախադասությունները կարելի է բնութագրել որպես խոսողի կողմից խոսակցին հանդիմանելու կամ կշտամբելու փորձ՝ նպատակ ունենալով խրատել նրան կամ կարգավորել նրա վարքը իրեն ցանկալի ձևով: Օրինակ՝

ա) “**Don’t be affectionate before strangers, Dirk**,” she said. “It makes me feel such a fool.”.

բ) “**You must not make compliments unless you mean them.**”.

գ) “**How can you be so cruel?**”

➤ **Արգելում, կանխում (prohibition, prevention)** արտահայտող նախադասությունների միջոցով խոսողի կողմից արգելվում կամ կանխվում է որևէ գործողության կատարում: Օրինակ՝ ա) “**Stop!**” She holds her hand to his mouth to hush him. “**Enough.**”, բ) “**Say no more, father.** I understand.”, գ) “**Nobody must move!** Do you hear?”

Պատմողական նախադասությունների միջոցով ևս, որոնց ստորոգյալն արտահայտված է “forbid” կատարողական բայով, կարելի է խոսակցին արգելել որևէ գործողության կատարում. “**I forbid you to see him.**”

➤ **Թույլտվություն (permission)** արտահայտող նախադասությունների միջոցով իրականացվում է թույլատրելու գործընթաց, ինչն էլ խթան է հանդիսանում հասցեատիրոջ համար՝ անհրաժեշտ գործողությունը կատարելու: Հաղորդակցական այս ենթատեսակը ներկայացնող նախադասությունները սովորաբար ձևավորվում են “may” կամ “can” եղանակավորող բայերի միջոցով: Օրինակ՝ ա) “**You may go now, Julie.**”, բ) “**Certainly! You can be absent** from work tomorrow and the next day, Dr Manson.”

➤ **Համոզում, դրդում (suasion, abetment)** ենթատեսակը ներկայացնող նախադասությունների միջոցով խոսողը փորձում է հասցեատիրոջը համոզել, դրդել կամ հրահրել որևէ գործողության: Օրինակ՝ “**Come Darcy,**” Bingley had said, “**You must dance.** There are so many extremely pretty girls in the room.”

Հարցական նախադասություններով ևս կարելի է արտահայտել դրդելու կամ համոզելու տարբեր աստիճանական ելևէջներ: Օրինակ՝

ա) “**Can’t you come and see me tomorrow?**” she urged him.”

բ) “**Couldn’t you persuade her, couldn’t you reason with her.**”

➤ **Քաջալերում (encouragement)** ներկայացնող նախադասությունների միջոցով խոսողը փորձում է քաջալերել կամ ոգևորել հասցեատիրոջը՝ բրդելով նրան որոշակի վարքի: Օրինակ՝ ա) *“Don’t lose your temper, Cary,”* said Edna nervously., բ) *“Don’t be silly,”* - he said aloud.-*“and keep awake and steer. You may have much luck yet.”*

➤ **Վստահեցում, հավաստիացում (entrustment, reassurance)** արտահայտող նախադասությունների միջոցով խոսողն իրականացնում է խոսակցին որևէ բանում վստահեցնելու կամ հավաստիացնելու գործընթաց, որի դեպքում վերջինից ակնկալվում է մտավոր գործողություն: Օրինակ՝ա) *“You can always rely on me to do my work properly, Miss Brown.”*, բ) *“But you must trust me! I have enough money to help your family and make them comfortable.”*

Գործնականում **հայցող (requestive)** խոսքային ակտերի շարքը կարող են դասվել՝ ա) **խնդրանքը**, բ) **աղերսանքը**, գ) **հրավերը**: Սրանք հորդորի կարգին բնորոշ գործաբանական դրսևորումներ են, որոնք չունեն պարտադրողական բնույթ:

➤ **խնդրանք (request)** ասելով նկատի ենք ունենում որևէ մեկին դիմելը, ինչի արդյունքում բավարարվում է ինչ-որ կարիք կամ ցանկություն: Խնդրանք արտահայտող հորդորական նախադասություններում սովորաբար կիրառվում է “please” քաղաքավարության ցուցիչը.*“Mother, he's all right! Please don't worry about---”,* թեև խնդրանքին առավել քաղաքավարի բնույթ հաղորդելու նպատակով բավականին ընդունված է հարցական նախադասությունների կիրառումը: Օրինակ՝

ա) *“Will you oblige me with your autograph?”*

բ) *“Can you tell me where I could get employment of any kind?”* I continued.

➤ **Աղերսանք (supplication)** ասելով նկատի ենք ունենում ջերմ խնդրանքը, որը բնութագրվում է որպես գործողության կատարման անհրաժեշտություն՝ հանուն ինչ-որ ուժի: Աղերսանք արտահայտող հորդորական նախադասությունները սովորաբար ընդգրկում են “for heaven's sake” և “for God's sake” արտահայտությունները: Օրինակ՝ ա) *“Now go, for God's sake, before it's too late!”*, բ) *“Jennie, for heaven's sake don't cry.”*

➤ **Հրավերը (invitation)** որևէ տեղ ժամանելու, ներկայանալու, ինչ-որ բանի մասնակցելու, որևէ աշխատանք կամ հանձնարարություն կատարելու կոչ է՝ ուղեկցված խնդրանքով: Նմանատիպ նախադասություններում ստորոգյալը սովորաբար ներկայացված է լինում հրամայական եղանակով կիրառված “come” բայի կառույցի միջոցով: Օրինակ՝ ա) *“Come to lunch some day”*, he suggested, as we groaned down in the elevator, բ) *“Come and have tea with me.”*

Որպես **ակնարկող (suggestive)** խոսքային ակտի ենթատեսակներ կարող են ընկալվել **խորհուրդը (advice)**, **առաջարկը (suggestion/offer)** և **նախազգուշացումը (warning)**: Ակնհայտ է, որ հորդորի նշված ենթատեսակներն ունեն հուշող կամ ուղղորդող բնույթ, թեև միտված են դրդելու խոսակցին գործողության:

➤ **խորհուրդ (advice)** կարծիքի արտահայտում է՝ հասցեատիրոջը խրատելու, ճիշտ ուղղություն ցույց տալու նպատակով, հուշելու՝ թե ինչպես վարվի տվյալ իրավիճակում: Օրինակ՝ ա) **“But take care! Think before you act”**, բ) **“You ought to go to bed now** so that you will be fresh in the morning.”

Խորհուրդ արտահայտելու համար կարող են կիրառվել նաև պատմողական նախադասություններ, որոնցում ստորոգյալն արտահայտված է “advise” կատարողական բայով: Օրինակ՝ **“I advise you to stay** as little as possible.”

Երբեմն, պայմանավորված խոսող-խոսակից փոխհարաբերություններով, պարտավորության մատնանշումը կամ հիշեցումը կարող է ընկալվել որպես մտերմիկ խորհուրդ: Օրինակ՝ **“You must be ready for the wrath of God, brother.”**

➤ **Առաջարկ (suggestion/offer)** կարելի է բնութագրել որպես ինչ-որ հնարավոր բանի մասին միտք, պատկերացում կամ քննարկում, որի արդյունքում հասցեատերը համաձայնում է կատարել գործողությունը միայնակ կամ խոսողի հետ համատեղ կամ հրաժարվում է կատարել այն: Օրինակ՝

ա) **“Come and see what we did with it before you leave.”**,

բ) **“You can tell her your boyfriend's waiting for you.** I can back you up on that,” he offers.

գ) **“Why don't you go back to Sicily** and show 'em what a rich American looks like?

դ) **“What about coming back and sitting down?”** Duncan asked.

Առաջարկ արտահայտելու նպատակով կիրառվող նախադասություններում առանցքային տեղ է գրավում համատեղ գործողության առաջարկի “let’s” գործաբանական ձևավորիչի գործածությունը: Օրինակ՝ **“Let's go outside and look** at the moonlight on the river.”

➤ **Նախազգուշացում (warning)** դիտվում է որպես ակնարկող խոսքային ակտերի շարքը դասվող ենթատեսակ, որով կարելի է հասցեատիրոջն ուղղակի զգուշացնել որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու մասին կամ հորդորել նրան նախապես ձեռնարկելու միջոցառումներ՝ անախորժությունից խուսափելու համար: Օրինակ՝

ա) **“Be careful crossing the street.** Can you see all right?”,

բ) **“Don't touch the dogs.”** Mr Heathcliff said. “They won't harm you if you leave them alone.”

Եզրակացություն: Անգլերենում հորդորի կարգը գործաբանական մակարդակում ներկայանում է տարաբնույթ իմաստային կազմով՝ հանդես բերելով հորդորի կարգին բնորոշ նրբերանգային մի շարք դրսևորումներ, որոնք կարելի է դասակարգել որպես առանձին ենթատեսակներ և համախմբել խոսքային ակտերի երեք տեսակներում՝ թելադրող, հայցող, ակնարկող:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Бельский А.В.** Побудительная речь // Ученые записки МГПИИЯ. -М., 1953. -Т.6. - С.81-147.
2. **Leech G.** Principles of Pragmatics.-London: Longman, 1983.- 119 p.
3. **Levinson S.** Pragmatics.-Cambridge: Cambridge University Press, 1983.
4. **Беляева Е.И.** Грамматика и прагматика побуждения: английский язык.-Воронеж: Изд-во Воронежского ун-та, 1992. -168 с.

Д. Р. ЕПИСКОПОСЯН

ПРАГМАТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ КАТЕГОРИИ ПОБУЖДЕНИЯ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются коммуникационно-прагматические особенности категории побуждения. Функциональный анализ побудительных предложений выявляет ряд разнообразий прагматических проявлений категории побуждения в английском языке.

Ключевые слова: категория побуждения, повелительное предложение, побудительное предложение, прагматические проявления.

D.R. YEPISKOPOSYAN

PRAGMATIC MANIFESTATIONS OF THE CATEGORY OF INDUCEMENT IN ENGLISH

The communicative-pragmatic features of the category of inducement are introduced. Functional analysis of inductive sentences reveals a number of varieties of pragmatic manifestations of the category of inducement in English.

Keywords: category of inducement, imperative sentence, inductive sentence, pragmatic manifestations.